




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ-արժեքներ Վ

4785

Միջանկյալ

891995

Պ-26

589

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ



891.995
Դ-26

ԹԻՖԼԻՍ-1924

2003

«Արեւիկայի Կայ» - ի Խմբագրութեամբ.

391.990.

7-26

Գլխավորապէս Եւրոպայի:

ՊԱՐԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՐ ԹԵՐԵՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ - իր Գլխ-24/2.

3597
1007
31382

Մ Ի Ն Ի Ս Ր Է Բ Շ

Կամեղիս մեկ ցործ.

(Փոքրերը կը խաղան մեծերի համար)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅԱՔՏԱՆ

1059



Թ Ի Փ Լ Ի Ս - 1924

Главлит № 986.

Тираж 500.

29564-Ա.Հ.



12595-58

ԻՐ

ԹԱՆԿԱԳԻՆ ԾՆՈՂՆԵՐ՝

ԿԱՐԱՊԵՏ ՅԵՎ ՍԱՆՈՍԵ ԴԱՐՔԻՆՑԱՆՆԵՐԻՆ
(ԱՍԼԱՆՅԱՆ)

ՎՈՐԴԻԱԿԱՆ ԶԵՐՄ ՍԻՐՈՎ

ՆԱԳԻՐԱԿԱՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

ԳՐԱԳՈՂ ԱՆՁՆԵՐ

- | | | |
|--|---|------------|
| 1. ՄԱՅՐԸ | } Գրքերական աշակերտներ են զաւելիներ, 14—16 տարեկան: Գործարարական սկզբում գրքեր ցանկան տարազով են, վերջը (կիր) մեծերի հարուստով: | Աննա-Մելիք |
| 2. ՈՆԻԿ | | Պահարե |
| 3. ՍՈՒՐԻԿ | | Հրաչիկ |
| 4. ՄԱՐԳՈ | | Աստղիկ |
| 5. ՍՈՆԻԿ | | Մարի |
| 6. ՍՈՒԼԻԿՈ ՎՐԱԳԻ | | Գուլագյան |
| 7. ՍԵՅԻԻ Թուրք | | Մոնոդյան |
| 8. ՄԵԼՔՈՆ ծառա. Ղազարիսիցի, 25 տ. | | Բաբյան |
| 9. ՎԱՐԴԱՆ. հարեանի զոնապանք, Լոռեցի, 30 տ. | | Սարգսարյան |



Բ Ա Յ Ա Տ Ր Ա Կ Ա Ն

Գործողության սկզբում բոլորն էլ սովորական աշակերտական հագուստով են: (Յանկալի և տարազ) ծառան սովորական տնային հագուստով, քիչ մրտա յերևում ու ֆարտուկ կապած: Վարդանը—(հարևանի տան դռնապանը) դռնապանի հագուստով, արխալուխով, վրայից պիջակ և ֆարտուկ կապած: Մոր զգեստը սովորական, վրչ շքեղ: Գործողության կիսից (Տես. ժ.) տղաները մեծերի հագուստով են. Սեյիդը—ֆրակով, բարձրակրունկ կոշիկներով, զլխին ցիլինդր, սպիտակ ձեռնոցներ հագած: Գրիմը—հինա դրած կարճ, կլոր խուզած մերուքով, բեխերը թուրքի ձևով խուզած: Սուլիկոն—Չերկեսկայով, խենչայով ու փափախով, բեխ ու միտքը վրացնակ: (ցանկալի և, վոր նմանվի Նոյ Ռամիշվիլուն): Մնիկը—սովորական պիջակ-ժիլետով, փոքրիկ, կզակի ծայրին կպած միտքով և կարճ բեխերով, հագած և պենսնե: (Յանկալի և, վոր նմանվի Սատիսովին) Սուրիկը—հագնում և ֆրենչ, սապոգներ, անկանոն բեխ ու միտքով, նման և մաուզերիստի տիպի: Մարգոն ու Սոնիկը գթության բույրերի հագուստով—կաթնականերով, թևերին կարմիր խաչ:

Բեմադրողին—Գործողության յերկրորդ կիսից (Տես. ժ) յերեսաների հագուստներն այնքան անշուրթ ու մեծ են, վոր ծիծաղելի են իրենց արտաքինով (թերևս կարեկատուբային): Ամեն մեկը ձգտում և «մեծ մարդ» ելեալ, շարժ ու ձևերն այնքան անտաշ են, վոր աղամայից ծիծաղ են հարուցանում: Յերեսաները խաղում են միանգամայն լուրջ—«մեծերի նման», և չեն դիմում վրեպել շարժի: Ծիծաղե-

լին նրանց չափազանց լրջութիւնն և, և այն հակասութիւնը, վորի մեջ նրանք բնկնում են—միանգամից: Պետք է դպրոցական նստարանի և այսպես կոչված միջնակարգ տեղի հակադրութիւնը—կոնտրաստը—այնքան ուղիւնք ու բնորոշ լինի, վոր խաղի լրջութեան պրոցեսը ծիծաղելի դարձնի այն դրութիւնը, վորի մեջ յերեւաններն ընկնում են: Դերակատարներն այս պայմանը պետք է խստութեամբ կատարեն: Վնչ մի շարժ չի թույլատրվում:

Դերակատարները պետք է լավ գիտենան, վոր ինչ ձեականութիւններ, վոր անում են, կամ ինչ վոր խոսում են, այդ ամենը իրենք են յերեւակայում և «ստեղծագործում», յեզ յեթե նրանք չեն կարողանում ամեն բան լրիվ կատարել, մի քիչ խոսելուց հետո, սպառվում է նրանց նյութը, նրանք անմիջապես դիմում են բռնեցքին, ներկա դեպքում—պատերազմին:

Ճանաչածը թողնվում է բեմադրողին և դերակատարներին, վոր մշակեն ու սուբեկտիվորեն արտահայտեն:

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ծանոթ. Այս պիեսը գրված է 1920 թ. մայիսի 1-ին: Բեմադրված Հայ Ակադ. կոլեկտիվի կողմից Ռուսթավելու թատրոնում 1923 թ. փետրվարի 21-ին: Սույն վերամշակված ու փոփոխութիւնները յենթարկվածը բեմադրվել է Թիֆլիսում—Հայաստան դրամատիկ խմբի կողմից 1923 թ. գեկտ. 12-ին Ռուսթավելու թատրոնում, և ն. թ. գեկտ. 29-ին Հավարարի բանվորական տիւմբում:

Մ. Դ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Բեմք—Մեծ սենյակ: Կահավորութիւնը միջակ (վոչ չքեղ) դիմացի պատի ձախ (աջուձախ հանդիսականները) անկյունում դուռը խոհանոց տանող: Աջ պատի յերկրորդ կիսի վրա—գեղի խորրը—դուռը փողոց տանող: Ձախ պատին յուսամուտ: Դիմացի պատին քարտեզ (կովկասի), անկյունում դրազարան կամ դրքերի պահարան: Պատերին նկարներ: Մեջտեղը սեղան, վրան դրաֆին, բաժակ, ամանեղեն: Կան ծաղկամաններ: Ձախ պատի մոտ թախտ, վրան գորգ և մուխտարներ: Մնացածը, ինչ վերաբերում է կահավորութեանը, թողնվում է սեմիսեորին:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա.

ՈՆԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՄԱՐԿՈ, ՍՈՆԻԿ .

ԲՈՂՈՐԸ—(Մի անկյունում կանգնած յերգում են «Սիրուն թիթեռ».) Սուրիկը չափ և խփում):

ՈՆԻԿ—Ե. . դու լավ չես չափ խփում. այ, դեպը կանգնի: Յերգենք «Մարտելյոզա»:

ԲՈՂՈՐԸ—Մարտելե՞ղա, Մարտելյոզա...

ՍՈՆԻԿ—Յեա սոպրանո կերդեմ:

ՍՈՒՐԻԿ—Յեա տենոր:

ՄԱՐԿՈ—Յեա ել երկրորդ ձայն:

ՈՆԻԿ—Լավ, լավ. ով ինչպես կարող է: ԴԵ, սկսում եմ. ուղիղ մատիս նայեցէք: ՄԵԿ, յերկու, յերեք: (Յերգում են - դեն չվերջացրած՝ ծափահարում են եւ լողմկում):

Տ Ե Ս. Բ.

ՆՐԱՆԵՐ, ՍՈՒՐԻԿ ԵՎ ՍԵՅԻԿ

ՍՈՒՐԻԿ ԵՎ ՍԵՅԻԿ—(Ներս են մտնում յուրաքանչյուրի ձեռքին մի զեքս):

ԲՈՂՈՐԸ—(Ընդառաջ վազելով նրանց): Ո՛ր... բարով, բարով, բարով եք յեկեկ:

ՍԵՅԻԴ—Ա՛յ, Ունիկ. հայրիկս եւ զիրքք քեզ համար առափ, նվեր ուղարկեց. առաջ, վոր շնորհավորեմ քս տոնը:

ՈՆԻԿ—Շնորհակալ եմ: «Անգլուխ ձիավոր» — ինչ լավ զիրք ե:

ՍՈՒԼԻԿՈ—Ես ել յես եմ քեզ նվիրում—«Ռոբինզոնի պատմութիւնը»:

ՈՆԻԿ—Շնորհակալ եմ:

ՄԱՐԳՈ—Յես կարգացել եմ: (Շրջան կազմած նայում են պատկերները): Ա՛յ, եստեղ ծովն ալեկոծվել ե, նավը խորտակվել. ա՛յ, անմարդարնակ կղզին...

ՍՈՆԻԿ—(Մտանալով խոհանոց տանող դռանը): Մամա, ժամա, Սեյիդն ու Սուլիկոն եկան:

Տ Ե Ս. Գ.

ՆԵԱՆԿ ԵՎ ՄԱՅՐԸ

ՄԱՅՐԸ—(Ներս գալով) Բարով երեխեր, բարով: Դե, հանվեցեք, հանվեցեք: (Ոգնում ե նրանց):

ՈՆԻԿ—Մամա ջան, տես ինչ զրքեր եմ ստացել...

ՄԱՅՐԸ—Տես, շուտ չփչացնես: Սուլիկո, մայրիկդ ինչո՞ւ չեկավ:

ՍՈՒԼԻԿՈ—Մայրիկս չի կարող գալ. մեզ մոտ հյուրեր են գալու: Շատ բարեւում եք:

ՄԱՐԳՈ—Ա՛յ, Ուրբաթը, Ուրբաթը...

ՄԱՅՐԸ—(Կանֆետ ե հանում պահարանից): Դե, առեք երեխեր:

ՍԵՅԻԴ—Շնորհակալ եմ:

ՍՈՒԼԻԿՈ—Շնորհակալ եմ:

ՄՅՈՒՄԵՐԸ—Մամա ջան մեզ ել տուր, մեզ ել:

ՄԱՅՐԸ—Ը՛հ, ես ել ձեզ: Դե, դուք այստեղ խաղացեք, զբաղվեցեք, իսկ յես գնամ կերակուր պատրաստեմ: Տեսեք, անկարգութիւն չանեք... (Դուրս):

Տ Ե Ս. Գ.

ՆԵԱՆԿ—ԱՌԱՆՅ ՄՈՐ

ՍՈՆԻԿ—Իսկ հիմի յեկեք խաղանք:

ԲՈՂՈՐԸ—Խաղանք, խաղանք:

ՍՈՒԼԻԿՈ—Ի՛նչ խաղանք:

ՍԵՅԻԴ—«Գող կատու»:

ՍՈՒՐԻԿ—Ձե, եզ լավ չի:

ՈՆԻԿ—Յեկեք թագավոր խաղանք:

ԲՈՂՈՐԸ—Թագավոր, թագավոր...

ՍԵՅԻԴ—Յես թագավոր եմ:

ՍՈՒՐԻԿ—Յես ել եմ թագավոր:

ՍՈՒԼԻԿՈ—Ձե, թագավորը յես եմ:

ՍՈՆԻԿ—Յես ել թագուհի եմ:

ՄԱՐԳՈ—Դու ինչ թագուհի ես վոր... թագուհին ա՛յ, յես եմ:

ՈՆԻԿ—Թագավորը մի հատ կը լինի. տասը հատ չի չի լինի: Ամեն մի յերկիր մի հատ թագավոր կունենա: Ա՛յ, յես թագավոր կը լինեմ, իսկ դուք ել ժողովուրդ. ինձ կը ծառայեք, ինձ համար լավ—լավ բաներ կը բերեք: Յես ձեզ ղինվոր կը ղինեմ, պատերազմ կուղարկեմ. մի խոսքով ինչ վոր ուզենամ, կանեմ. իսկ դուք սուս կը կենաք:

ԲՈՂՈՐԸ—Ձենք ուզում, չենք ուզում. կամ ամենքս ել թագավոր լինենք, կամ թե չե՛՛ վոր վոր: (Դժգոհութիւն աղմուկ):

ՈՆԻԿ—Ձե, չե. կամ յես մենակ թագավոր եմ, կամ թե չե՛՛ ուրիշ բան խաղանք:

ՍԵՅԻԴ—Յես Շահ կը լինեմ, կամ Սուլթան:

ՍՈՒԼԻԿՈ—Թագավորը չը կա, չը կա, հիմի մինիստր կա, յեկեք մինիստր խաղանք:

ԲՈՒՆՈՐԸ—Մինիստր, մինիստր...

ՄԱՐԳՈ—Յե՛ս ել եմ մինիստր:

ՈՆԻԿ—(ծաղրով) Մինիստր... չե, չե, ել ինչ... սիվ ե տեսել աղջկա մինիստր:

ՍՈՒԼԻԿՈ—Աղջկա մինիստրը վորն ե. դուք ել մեր ազախնները կըլինեք:

ՍՈՆԻԿ—Ձե՛մ ուզում, յես ազախին չեմ լինի:

ՍՈՒՐԻԿ—Լավ, լավ, դուք ել գթության քույրեր, սեստրիցա կըլինեք. գինվորների համար չորեր կըկարեք. քիչ բան կա անելու, ինչ ե...

ՍՈՆԻԿ ԵՒ ՄԱՐԳՈ—(Ուրախ): Հա. հա. գթության քույր...

ՄԱՐԳՈ—Սխալա՛կ կասե՛նկաներով... (Յույց տալով):

ՍՈՆԻԿ—(Ընդհատելով): Սխալա՛կ գոգնոցներով... թեվին...

ՄԱՐԳՈ—(Ընդհատելով): Թե՛ին նարմիր խաչ...

ՈՆԻԿ—Լավ, լավ, մի խանգարեք. սպասեցեք: (Մտածելով) Այժմ հարկավոր ե, վոր մինիստր դառնանք:

ՍՈՒՐԻԿ—Ի՛նչպե՛ս դառնանք:

ՍԵՅԻԴ—Այ, կասենք մինիստր ենք ու պըծավ, դնաց:

ՍՈՒԼԻԿՈ—Եղպես հո չի կարելի. պետք ե ամեն մեկս մի յերկրի մինիստր դառնանք, հող ունենանք, ժողովուրդ ունենանք, գորք ունենանք...

ՈՆԻԿ—Լավ: Եկեք ամեն մեկս մի յերկրի մինիստր դառնանք. հող ունենանք, իրար հետ մինիստրի պես խոսենք, կովենք, հաշովենք, հետո ելի ուրիշ—ուրիշ բաներ—անենք:

ՍՈՒՐԻԿ—Բայց ինչո՞ւ կովենք... Առանց կովի չի կարելի...

ՈՆԻԿ—Վո՛չ. մինիստրն անպատճառ պետք ե կովի: Ել ինչի՞ մինիստր ե, վոր կովի չանի:

ՍԵՅԻԴ—Դե, բոլորս ել մինիստր դառնանք. այսպես որինակ. Սուլիկո, դու կը լինես Վրաստանի մինիստր. Ոնիկն ու Սուրիկը—Հայաստանի,—յես ել Ադրբեյջանի...

ՄԱՐԳՈ—(ծաղրելով): Ոհո, մինիստր... Դուք ինչ մինիստր եք...

ՍՈՆԻԿ—Մենք սե՛ւ սեստրիցեն ենք լինելու:

ՍՈՒՐԻԿ—Սեստրիցեն ամենքինն ե. ով վոր վիրավորվի, պետք ե խնամեք, դեպ տար:

ՍՈՒԼԻԿՈ—Յեկեք առաջ յերկրները բաժանենք, հետո:

ՍԵՅԻԴ—Բաժանենք, բաժանենք, դնանք քարտեզի մոտ: (Մոտենում են քարտեզին)

ՈՆԻԿ—Այ, ես Բուրը, ես ել Քաթայիսը—ես Վրաստան. Սուլիկո, ես քեզ:

ՍՈՒԼԻԿՈ—Ես ել Արարատը, Երևանը,—ես ել Հայաստան. ես քեզ ու Սուրիկին:

ՍՈՒՐԻԿ—Ես ել Կասպից ծովը, Բագու—ես ել Սեյիդին:

ՄԱՐԳՈ—Սպասեք, սպասեք, մեծ—մեծ խոսում եք. ձեզանից սիվ ե տեսել մինիստր:

ՈՆԻԿ—Յե՛ս: Այ, մի որ մենք տոն կատարեցինք զարոցում, մեզ տարան զրոտանքի. մինիստրը, Հայաստանի մեծ մինիստրը յեկել եր. այ, ավամորբիլի մեջ ետպես ձգված, ակնոցներով մեծ մարդ եր. յեկավ ու մեր մոտով զրո՛ւ՛ւ... անց կացավ:

ՍԵՅԻԴ—Յես ել եմ տեսել մինիստր. այ, մեր մինիստրն եկավ, զրոշակը զլխին... (Ժիծաղ):

ՍՈՒԼԻԿՈ—Այ, սուտ ես ասում. զրոշակը մի-

նիստը զլիսին չի լինի, այլ ձեռքին: Այ, մեր մեծ միսնիստըն եկավ մի որ մեզ մոտ, դպրոց... (ծիծաղ): Վա, ինչ եք ծիծաղում. Աստված վկա յես միսնիստը տեսել եմ...

ՄԱՐԳՈ — Վոչ վոք ել չի տեսել միսնիստը. սուտ եք խոսում...

ՍՈՆԻԿ Իսկ յես սեստրիցա տեսել եմ. նա մեր բակում ապրող ոֆիցերի հետ ամեն որ պոզրուկով ման եր դալի...

ՄԱՐԳՈ — Դուք միսնիստը չեք տեսել, չեք ել կարող խաղալ:

ՍՈՆԻԿ — Յեթե եղբան դժվար ե, յեկեք ուրիշ խաղ խաղանք:

ՈՆԻԿ — Սպասեցեք. հեշտ եք կարծում, ինչ ե. դեռ պետք ե իմանանք, թե միսնիստըն երն ինչպես են հագնվում, ինչպես են խոսում իրար հետ...

ՍԵՅԻԴ — Բեխեր ու միրուք պետք ե չինենք: (ծիծաղ):

ՄԱՐԳՈ — Եղ հո շատ յերկար բան ե:

ՍՈՒԼԻԿՈ — Յես մենշեիկ եմ: (ծիծաղ) Ինչ եք ծիծաղում. ամեն միսնիստը պետք ե մենշեիկ լինի:

ՈՆԻԿ — Յես դաշնակցական եմ:

ՍՈՒՐԻԿ — Յես ել եմ դաշնակցական:

ՍԵՅԻԴ — Բա յես ինչ եմ: (ծիծաղ)

ՄԱՐԳՈ — Դու ել Սեյիդ ես:

ՍՈՒԼԻԿՈ — Դու մուսավաթ ես:

ՍՈՒՐԻԿ — Դաշնակցականը գոչալ ե:

ՍՈՒԼԻԿՈ — Մենշեիկը համ գոչալ, ե համ, համ... կնյալ:

ՍԵՅԻԴ — Իսկի ել չե. գոչաղն ել, կնեաղն ել ու բեզն ել Մուսավաթն ե:

ՄԱՐԳՈ — Չեմ ուզում. եսպես չի կարելի. յես

սեստրիցա եմ ուզում լինել. չուտ սկսեցեք: Յես ում պիտի պոզրուկ անեմ:

ՈՆԻԿ — Սպասիր. ինչ պոզրուկ. հեշտ բան հո չի... Դե, դե, յեկեք եստեղ: Յերկրներն արդեն բաժանված են. տեղերը — վորոշ. այժմ պետք ե մտածենք անցադերի, պրոպուսկների ե տամոմնյայի մասին:

ՍՈՆԻԿ — (Չկորին գիրք ընկած) Յես գնում եմ խոհանոց, մայրիկին ասեմ, վոր ինձ կարմիր խաչ տա ե սպիտակ դոպնոց:

ՍՈՒԼԻԿՈ — (Առաջը կտրելով) Պրոպուսկ: Դեռ պետք ե թույլտվություն ստանա, վոր մի յերկրից մյուսն անցնես: Դու այժմ Վրաստանումն ես. դիմիր ինձ, վոր անցաթուղթ տամ, թե չե ճանապարհին Սադախլո կայարանում քեզ կը բռնեն ե չեն թողնի անցնես: Իսկ ես գիրքը թող այտեղ. հետո վոչինչ չես կարող տանել:

ՍՈՆԻԿ — Վա... Եստեղից խոհանոց յերկու քայլ ե, ինչ պրոպուսկ:

ՍՈՒԼԻԿՈ — Առանց անցաթղթի չի կարելի. մի խնդիր գրի ե թույլտվություն ստացիր:

ՍՈՆԻԿ — Ես ինչ յիմար խաղ ե, մարդ ազատ մանգալ ել չի կարող. չեմ ուզում: (Ծովում ե ղեպի Սեյիդը):

ՍԵՅԻԴ — (Առաջը կտրելով) Պրոպուսկ: Յես չեմ թույլ տա իմ յերկրի վրայով անցնես առանց անցաթղթի: Ո՛վ եք, ե վճարեցի հպատակ:

ՄԱՐԳՈ — Ինչ հպատակ, ինչ բան. մենք գնում ենք մայրիկի մոտ:

ՈՆԻԿ — Խնդիր գրեցեք: Վճարեցի հպատակ եք:

ՍՈՒԼԻԿՈ — Քանի վոր նրանք Վրաստանումն են ապրում — ուրեմն Վրաստանի հպատակ են:

ՍՈՒՐԻԿ — Վոչ. քանի վոր նրանք հայ են, ուրեմն՝ Հայաստանի հպատակ են:

ՍԵՅԻԳ — Իսկի ել չէ. Վորովհետեւ ձեր հայրիկն ու մայրիկը Գանձակեցի են, ուրեմն՝ դուք Ազրբեջանի հպատակ եք:

ՍՈՒՐԻԿ — Ի՜նչ եք զանա տանում. ինչ հպատակ, ինչ բան. մամայի մոտ ենք ուղում՝ գնալ. պրծավ զնաց:

ՍՈՒՐԻԿՈ — Խնդիր գրեցեք:

ՄԱՐԳՈ — (Մի թղթի կտորի վրա խազրզում է ու տալիս): Առ:

ՍՈՒՐԻԿՈ — Խնդիրը հայերեն է գրած, պետք է վրացերեն լինի: (Մոտենում են Սեյդին):

ՍԵՅԻԳ — Խնդիրը պետք է թուրքերեն լինի գրած:

ՍՈՒՐԻԿ — (Բարկացած) Մամա. մայրիկ. չեն թողնում քեզ մոտ գանք:

ՍՈՒՐԻԿ — Դե լավ, Սեյդ, թող անցնեն:

ՍԵՅԻԳ — Չի կարելի. գուցե զրանք բողջիկներ են:

ՄԱՐԳՈ ՅԵՎ ՍՈՒՐԻԿ (Մխտն) Մայրիկ, մայրիկ... Թողեք ելի, վա՛... Ի՜նչ բողջիկ. մայրիկի մոտ ենք գնում: Մայրիկ... (Ներս է մտնում՝ մայրը):

Տ Ե Ս. Ե.

ՆՊԱՆԻ ՅԵՎ ՄԱՅՐԻԿ

ՄԱՅՐԻԿ — (Գոհան մոտ յերևվալով) Ի՜նչ աղմուկ է:

ԲՈՒՐԻԿ — (Բացի Մարգոյից ու Սոնիկից) Պրոպուսի:

ՍՈՒՐԻԿ — Մայրիկ. սրանք ինչ վոր մինիստր են գառել ու չեն թողնում քեզ մոտ գանք:

ՄԱՅՐԻԿ — (Առաջ գալով): Ի՜նչ մինիստր... (Մոտենում է Ոսկի):

ՈՒՐԻԿ — Ներեցեք տիկին. անցաթուղթ ունեք:

ՄԱՅՐԻԿ — (Ժիծաղելով) Ի՜նչ անցաթուղթ...

ՈՒՐԻԿ — (Բարձրանալով աթոռի վրա) Սիրելի մայրիկ. այսօր, հենց այս բոլորին մենք վորոշեցինք մինիստրներ դառնալ. յերկրները բաժանել ենք: Ահա Սեյդը — Ազրբեջանի մինիստր, Սուրիկոն — Վրաստանի, իսկ յես ու Սուրիկն ել — Հայաստանի: Մեր Հայաստանը լավ յերկիր է, և մենք բոլորս զաջակցականներ ենք: Տո՛ւ, ծափահարեցեք Է... (Ժախալալում են) Հիմի խոսելու հերթը Սուրիկոն — քոնն է:

ՍՈՒՐԻԿՈ — Ըմ... Ըմ... իս... իս, յես չեմ ուզում: Թող Սեյդը խոսի:

ՍԵՅԻԳ — Ըմ... Ըմ... Ըմ... Ըմ... յես ել չեմ ուզում:

ՍՈՒՐԻԿ — Ի, ի... Մախարաներ... մինիստր... պրոպուսի... (Լիզու է նանում):

ՄԱՅՐԻԿ — Բան չեմ հասկանում. եզ ի՜նչ տեսակ մինիստրներ եք: Մինիստրները մեծ — մեծ մարդիկ են լինում. բեխով, միրուքով:

ՍՈՒՐԻԿ — Մենք ել բեխ ու միրուք կը չինենք:

ՄԱՅՐԻԿ — Բայց բեխ ու միրուքից ի՜նչ կը դուրս գա. խելք է հարկավոր, խելք...

ՈՒՐԻԿ — Մենք ել մեր խելքի չափ մինիստրներ կը լինենք:

ՄԱՅՐԻԿ — Լավ. բայց չե՛ վոր դուք ժողովուրդ պետք է կառավարեք, զորք պիտի ունենաք, վոր յերկրի սահմանները թշնամուց պաշի, յես ի՜նչ զիտեմ հազար ու մի բան:

ՍԵՅԻԳ — Մենք հոպես ենք ուզում:

ՍՈՒՐԻԿՈ — Բեխ ու միրուք կը չինենք, մեծերի շորեր կը հագնենք, կը մեծանանք:

ՍԵՅԻԳ — Յես գնամ քեռի Հառան բեղի շորերը հագնեմ:



12595-58
308 1007 31352

ՍՈՒԼԻԿՈ—Յես ել իմ ձիա, կնյազ Իլիկոնը:

ՈՆԻԿ—ՍՈՒՐԻԿ—Մենք ել ..

ՈՆԻԿ—Մայրիկ ջան, մեզ շորեր կը տաս, չե:

ՄԱՅՐԻԿ—Կը տամ, ի հարկե. միայն մի պայմանով, վոր թույլ տաք սենյակի մեջ ազատ ման գամ ու առանց պրոպուսկի պահարանից հանեմ:

ՍՈՆԻԿ—ՄԱՐԳՈ—Մենք սեսարիցա յենք:

ՍՈՒՐԻԿ—Դե շուտ, Սուլիկո, Սեյիզ, գնացեք, հազնվեցեք, բեխ ու միբուք շինեցեք ու շուտ յեկեք, վոր խաղը շարունակենք: (Ներս և մտնում Մեյրոնը):

Տ Ե Ս. 2.

ՆՐԱՆԻ ՅԵՎ ՄԵԼԻՔՈՆ

ՄԵԼԻՔՈՆ—Խանրմ, աղեն եկավ, կանչում ա:

ԲՈԼՈՐԸ—(Շրջապատելով Մեյրոնին) Պրոպուսկ:

ՄԵԼԻՔՈՆ—Խանրմ, ի՞նչ ասեմ:

ՄԱՅՐԻԿ—Իսկույն գալիս եմ: Ամանները տար խոհանոց:

ՄԵԼԻՔՈՆ—(Ուզում և տառջ զալ, բոլորը շրջապատում են նրան): Ի՞նչ եք ուզում ինձանից:

ՍՈՒԼԻԿՈ—Պրոպուսկ:

ՍԵՅԻԴ—Պրոպուսկ: Ի՞նչ մարդ ես, ո՞վ ես:

ՄԵԼԻՔՈՆ—Ի՞նչ պրոպուսկ. յես ըստի մարդ եմ:

ՍՈՒԼԻԿՈ—Վերսեղացի յես:

ՄԵԼԻՔՈՆ—Ղազախեցի:

ՍԵՅԻԴ—Թողեք գրան. դա Ազրբեջանցի ե:

ՍՈՒԼԻԿՈ—Բոլշեիկ ես, թե մենչեիկ:

ՄԵԼԻՔՈՆ—Յես ըստի, սանչալար մարդ եմ:

ՍԵՅԻԴ—Ո՛ր... սա բոլշեիկ ե:

ՍՈՒԼԻԿՈ—Ե՛յ, բոլշեիկ, իմ յերկրից հեռու կաց:

ՈՆԻԿ—Ի՛մ յերկրից ել հեռու կաց:

ՍԵՅԻԴ—Ի՛մ յերկրից ել հեռու կաց:

ՄԱՅՐԻԿ—Պարոն մինիստրներ, թույլ տվեք ամանները տանի: Դեռ մինիստր դառեք հետո:

ՈՆԻԿ—Դու իմ սալդաթը չկր դառնաս...

ՄԵԼԻՔՈՆ—Դենք կորի:

ՍՈՒՐԻԿ—Մեր յերկրից վոչինչ մի տանի:

ՄԵԼԻՔՈՆ—Խանրմ, տա խելոք կենան:

ՄԱՅՐԻԿ—(Միջամտելով): Ես հետո, հետո, յերբ վոր արդեն կարգին մինիստրներ կըլինեք, են ժամանակ անցաթուղթ կուզեք, իսկ այժմ դեռ ժամանակ չե, թողեք:

ՄԵԼԻՔՈՆ—(Ամանները վերցնում և ուզում և գնալ):

ՍՈՒՐԻԿ—(Փեշից քաշելով): Մի տանի:

ՄԵԼԻՔՈՆ—Դե բոլ ելավ, ի՞նչ եք շաշ-շաշ բաներ անում. հիե հենց մինիստր ես՝ դատել վոր... Հիե ես տանն եք մինիստր, հլա մի դուս եկեք, տեհնամ ուրիշ ըրեխանց հետ հազ անելիս, վոնց եք վաճ նանի կանչում... (Դուրս և գնում):

Տ Ե Ս. 3.

ՆՐԱՆԻ ԱՌԱՆՅ ՄԵԼԻՔՈՆ

ՄԱՐԳՈ ԵՎ ՍՈՆԻԿ—(Ուրախ) Գնանք, գնանք, մամա ջան, մեզ կարմիր կտորներ աուր խաշեր կարենք:

ՈՆԻԿ—Դե, Սեյիզ, Սուլիկո, դուք ել գնացեք շորեր հազեք ու շուտ եկեք. չուշանաք մի, չուշանաք...

ՍՈՒՐԻԿ—Մայրիկ ջան, մեզ ել շորեր տուր:

ՄԱՅՐԻԿ—Այո, այո, յեկեք տամ: (Բոլորը դուրս են գնում):

Տ Ե Ս. Բ.

ՄԵԼԻՔԱՆ ԶԵՏՈ ՎԱՐԳԱՆ

ՄԵԼԻՔԱՆ—(Մի փախաւ ձեռքին ներս և մտնում փողիները վարքերը) Արի, արի, տանը մարդ չի կա, արի տենամ մեր զոհերիցն ինչ խաբար ունենա:

ՎԱՐԳԱՆ—(Մտնելով—ծոցից մի նամակ և հանում տալիս Մելիքին) Առ, կարգա:

ՄԵԼԻՔԱՆ—(Կարդում և) Սիրելի վորդի վարդան ջան: Մենք փողջ և առողջ ենք, միևնույնը ցանկանում ենք և քեզ: Ամեն: Թե իմանաս շատ նեղութենի մեջ ենք: Հայցներս հասել ա, ճարվում չի: Ասում են թագա հրաման ա դուս եկել, հայ ու վրացի, մին ել հայ ու թուրք իրար հետ կռիվ պահն անիլ. ել յետ փոսի տակ կորչիլ պտենք: (Մելիքն գլուխը շարժելով): Ծը', ծը', ծը', յանի բա բոլ չի', հերիք չի'... կռիվ հա, կռիվ, ինչ են տվել' իրարից կարքմ չեն յետ առնեն:

ՎԱՐԳԱՆ—Ել ասում էս... քանզվեցինք, քարը քովեցինք: Դու հլա դենը կարգա, գենը...

ՄԵԼԻՔԱՆ—(Ծաղրունակում և) Դե հու գիցում ես, մեր Լոսին ել նեյտրալ—գոնու են շինել, ու թող չեն անում տեղներիցս ժամ գանք: Ես ինզլիդին, աջ, սրանց յեկած ճամբեն քանդվի, թող չեն անում փոշ Հայաստանից, փոշ ել վրաստանից մի մատի փաթեթան ելա անց կոցները դբա մեզ: Մնացել ենք ջրի ու կրակի մեջ տեղը: Մերքա սաստիկ հիմանդ ա. դարդած պարաշուկիդ ճամփին խլել են. մեզ չի հասել: Թե կարքմ ես մի հնարով հենց դարդի, վոր խլեն փոշ:

ՎԱՐԳԱՆ—Ասիլը—Հեշտ ա «մի հնարով դարդի»: Ել հնար են թող արել...

ՄԵԼԻՔԱՆ—Վախիլ մի. դրանց հնարն ել կրճարվի:

(Ծաղրունակում և կարդալ): Դեղը վոր կրակ տաա՝ շորի հոտ չի գալ: Մենք հայ չունենք ուտելու, հայ-վաննին առանց ալափի են մնացել, կտորդում են, համա ես ինզլիդներ չամար պեռք ա ամեն բան զրթ-նենք ու հագիր անենք: Յես գիցում չեմ, թե ես յերբ հային դուլումը, ես մուրեխը վնդիտն եկավ ընդավ մեր մեջը: Այլրաչի վախտն ել մեր պապերը ես որը քաշել չեն: Մնամ քո կարոտակից հայը՝ Մուրդուգանց խաչի:

ՎԱՐԳԱՆ—Կարգացիր, տեսնա... հրեա ըստենց ա ըլում հա...

ՄԵԼԻՔԱՆ—Դու հլե ես ես ասում. մի հլա մեր գեղիցն ել խաբար առ ե... ինչ վոր հին քեռվա, համփա, սորածնիկ ու գող ավագակ դուլգուրնի կան, ել յետ հավաքվել են ու գեղը քարոքանդ են անում: Մի տարի մեր գեղըմը մի վարժապետ կար, սխան իշի գարի փայ անել չեր գիցում, հմի տարել են ու մեր գլխին մինիտար շինել, վոր երգիր կառավարի: Դու գիցում ես պարլամենտին ինչ զազ ա...

ՎԱՐԳԱՆ—Չէ...

ՄԵԼԻՔԱՆ—Բա փոց չես գիցում. բա են վոր յեկան նամերնի փայ արին, են ընչի՞ հրմար եր:

ՎԱՐԳԱՆ—Յես ինչ գիցամ...

ՄԵԼԻՔԱՆ—Են նամերնին փայ արին, գեղ և գեղ դուռնա-գնդով ման եկան, յեղով ել յետ հվարեցին տարան, վոր Պարլամենտի սարքեն. յանի թե մեծամեծ մարդիկ ըրբողին մի տեղ թուփ ըլեն ու խոսան աշխարհի խեր ու շատեց:

ՎԱՐԳԱՆ—Յեննա...

ՄԵԼԻՔԱՆ—Յեննա, հմի միթամ թե խելքնին հվարվել են: Խելքնին ել սով են. վարժապետ, աղ-վախատ, ինժիներ, դոխուուր, հին պրիստավ, քյոխվա, գեղը թալան տվող համփա մարդիկ: Չաչանակի նման

զրից են անըմ, զրից, ու յեննա դուս գալի հարեանների հետ կռիվ բրցրմ:

ՎԱՐԴԱՆ — Ըմբ... .

ՄԵԼԻՔՈՆ — Բա... . Ես կռիվսին լոխ ես պարլա- մենտին են սարքրմ:

ՎԱՐԴԱՆ — Խի... .

ՄԵԼԻՔՈՆ — Խի պտի. պտրապ մարդիկ են. բան ու գործ չունեն. թայփա-թայփա ելած: Եզ պարլա- մենտըր նստած հալա իրար ուխ են կոծըմ, յեննա կռիվ քցրմ, ամեն մինն ինքն ա ուզըմ գլխավոր ըլի: ՎԱՐԴԱՆ — Վերջը... .

ՄԵԼԻՔՈՆ — Վերջն ենա, վոր եղբան կռիվը լոխ մեր գլխինա. ա. ամեն մինն ուզըմ ա ինքը մեր գըլ- խին նստի:

ՎԱՐԴԱՆ — Բա սրան մի ախըր չի կա... .

ՄԵԼԻՔՈՆ — Խի չի կա... . սրա ախըր ուսն ա, ուսը... .

ՎԱՐԴԱՆ — Ե... . բան տեսիր դու ել: Ենանգեր ուսն ել տեսանք: Բա են պրիստաֆն ու նաչալնիկը ուս չին, վոր մեր հոգին հանըմ ին... .

ՄԵԼԻՔՈՆ — Պան, քու ըշխարհից բխաբար տունը քանդվի վոչ. արա, գու վոճըի ես ապրըմ... . քոլըմն էս, թե սարի ծերին: Բա դիզըմ չեն, վոր են դայդի ուսաներին, լոխին ել հատացրել են... .

ՎԱՐԴԱՆ — Ո՞վ ա հատացրել:

ՄԵԼԻՔՈՆ — Բալչեիկը:

ՎԱՐԴԱՆ — Բալչեիկը խի, ուս չի... .

ՄԵԼԻՔՈՆ — Բալչեիկն ամեն տակ ա, ով վոր քյա- սիբ ա: Ով վոր մեզ նման ուսնչպար մարդ ա, յաթե չե բանվոր ա—նա բալչեիկ ա:

ՎԱՐԴԱՆ — Հմի քու ասիլով յես ու դու բալչեիկ ենք... .

ՄԵԼԻՔՈՆ — Բա ինչ ենք, վոր բալչեիկ չենք:

ՎԱՐԴԱՆ — Ըմբ... . Բա մեր խաղեյինն ասըմ ա, թե բալչեիկինն ուս բոսյակա են, վոր գան ըստի հա, թալան դեն տալ սաղ աշխարքը:

ՄԵԼԻՔՈՆ — Ո՞վ դի թալան տալ... . ըսհե դագ չի կա: Յես վոր Բագու մի գալողըմ դուլլուդ ի անըմ, ընդի բոլչեիկ չաա կար. նրանցից սվորել եմ: Տո շահ, ինչս դեն թլանիլ, հը, ինչքա... . ինչ ունիմ, վոր ինչս թալանեն. յես ու դու հի թլանված ենք ու պրծած. թող նա վախի, ով վոր թալանվելու գագ ունի:

ՎԱՐԴԱՆ — Աբա դորթ վոր ե... .

ՄԵԼԻՔՈՆ — Բա դըրթ ել ե... . ես խի ենք յես ու դու ըստի նորարուլին անըմ, հը. . խի... . խի չենք մեր տանը մեր գեղումը, մեր հալալ աշխատանքին, մեր վար ու ցանին: Չյունքի մեր գեղի համփենին, բեգերն ու չնսփիկ կնյապին մեր հողը գավթել են, մեզ ուզըմ են եշի ժշակ շինեն, բանացեն ու մեր քրտինքն իրանք ուտեն: Հմի վոր եզ հողը յես ու դու, մին ել մեզ նմանները խլենք ու փայ անենք, թալան կըլի... .

ՎԱՐԴԱՆ — Բա դրա թալանը վորն ա... .

ՄԵԼԻՔՈՆ — Չե. թալան կըլի, համա անմ համար թալան կըլի. աղալարի հըմար: Ռուս բալչեիկը վոր գա, նա վոնց պտի թալան անիլ. հողը հու շլակիլ չի պտի ու տանիլ ուսսեթ:

ՎԱՐԴԱՆ — Յեանի հմի քու զրիցիցն ենա դուս գալի, վոր յես ու դու բալչեիկ ենք ելի... .

ՄԵԼԻՔՈՆ — Ընեկ թամամ պերվի սորա:

ՎԱՐԴԱՆ — Ըմբ... .

Տ Ե Ս. Թ.

ՄԱՐԳՈՒ ՅԵՎ ՍՈՆԻԿ

ՄԱՐԳՈՒ ՅԵՎ ՍՈՆԻԿ—(Թուշկոտալով) Մեկքոն, Մեկքոն, մենք սեփարիցա ենք, սեփարիցա ենք...

ՄԱՐԳՈՒ—Հրէս, կարմիր խաչ ունենք:

ՍՈՆԻԿ—Հրէս, կապիկա ունենք:

ՄԱՐԳՈՒ—Մեկքոն, ոֆիցեր դառ, քեզ պողրուկ անենք:

ՄԵԼԻՔՈՆ—Շաշվել եք, ինչ ա...

ՍՈՆԻԿ—Մենք սեփարիցա ենք, Ռեիկն ու Սուրբիկը մինիստր են, Սեյիդն ու Սուլիկոն էլ հրէս կը գան, նրանք էլ են մինիստր... Վարդան, դու էլ ինձ համար ոֆիցեր դառ, վոր յես էլ քեզ պողրուկ անեմ:

ՄԵԼԻՔՈՆ—Ափիցար-մափիցար, պողրուկ-մողրուկ չեմ զիգալ. ըստիեք քանդեք վոչ, կտարատեք, թե չե... Ա՛րի, ախպեր, արի գնանք. սրանք էլ ըստի են մեր զլխին մինիստր դառնում, հալբաթ աշխարհս լոխ ըսենց ա հմի: (Մեկքոն յեմ/վարդան դուրս են գնում):

Տ Ե Ս. Ժ.

ՄԱՐԳՈՒ, ՍՈՆԻԿ, ՀԵՏՈ ՌԵԻԿ, ՅԵՎ, ՍՈՒՐԻԿ

ՈՆԻԿ ՅԵՎ ՍՈՒՐԻԿ—(Ներս են մտնում ուրախ-ուրախ) Ահա և մենք:

ՄԱՐԳՈՒ—**ՍՈՆԻԿ**—Մինիստրներ... (ծաղը):

ՈՆԻԿ—(Կարգադրություններ և անում): Ե՛յ, Սուրբիկ, տես, մարգափարի կրկենտա: Դուք էլ Մարգո, Սոնիկ, խոտակցության չխառնվեք, չխանդարեք: Ա՛յ, դու, Սուրբիկ, ետեղ կանգնիր. ետեղս: (Յույց և տալիս տեղն ու ձեռքը) զլուխդ բարձր, հպարտ, ու զիդ: Դե, չմոտանար ինչպես զլուխ տալ, ինչպես մոտենալ.

այ, ետեղս... (ձեմականություններ են անում) Հերթով կը խոսեք: (Դուռը թաղխում են):

ՍՈՒՐԻԿ—(Չեղբը շրթունքին մոտեցնելով-խոր-նդափոր): Մ'ս'ս' Էկան, Էկան... (Սպասողական դիրք: Շարունակում են թաղխել):

ՈՆԻԿ—Ներս համեցեք պարոններ: Գլուխ տվեք: (Չեն նկատում թե մտնողը Մեկքոնն է. գլուխները խոնարհում են):

Տ Ե Ս. ԺԱ.

ՄԱՐԳՈՒ, ՅԵՎ, ՄԵԼԻՔՈՆ

ՄԵԼԻՔՈՆ—(Մտնում և տեսնելով նրանց տա-րորինակ տեսքն ու դիրքը) Ետ ի՞նչ շորեր եք հագել ա՞մ...

ՈՆԻԿ—(Բարկացած): Ի՞նչ ես ծիծաղում հիմար: Մենք էլ հենց իմացանք նրանք են: Ի՞նչ եղան, չեն յերեմում...

ՄԵԼԻՔՈՆ—Հալա միրութին, միրութին... ի՞ծի միրութ... հա, հա, հա...

ՈՆԻԿ—Ի՞նչ ես հոհոում. ձենդ կտրի. թե չե կըհրամայեմ, վոր քեզ խելույն բանտարկեն: Ետ եր պակաս, վոր մինիստրներին ծագրես:

ՄԵԼԻՔՈՆ—Ի՞նչ մինիստր, առ շա՛շ, դու ըսկի պրիստով էլ չես դառնալ:

ՈՆԻԿ—Դենք կորի, մի խանդարի: Գնա, դառ մոտ սպասիր, վոր գան դուռը նրանց առաջ բաց անես: Գնա...

ՄԱՐԳՈՒ ՅԵՎ ՍՈՆԻԿ—Գնա:

ՄԵԼԻՔՈՆ—Սեփարիչկա, սեփարիչկա, մեր մի-նիստրի վորը ցավում ա, մի դեղ անես...

ՍՈՆԻԿ—Մամա, ես Մեկքոնը...

ՄԱՐԳՈՒ—Սպասիր մայրիկին ասեմ...

ՄԵԼՔՈՆ— («Չեստ» տալով): Վաշ բլադարող,
դոսպոդին մինիստր իժի միրուքով, պազվուտե...

ՈՆԻԿ— Հիմարի գլուխ, կոպիտ գլուղացի, սպա-
սիր, տես քեզ վոնց դուրս կանեմ տանից՝ Ը...

ՄԵԼՔՈՆ— Բաշպուրտ յետո, զազրանիցա պոչով:

ՍՈՆԻԿ— Ինչ հիմարն ես:

ՄԵԼՔՈՆ— Որիվորթ Մարգո, սեստրիչկա, (Յեր-
զում՝ ն) «Սեստրիչկի ձեռք բլուզին մեռնեմ, Սեստ-
րիչկի կարճ բլուզին մեռնեմ»:

ՈՆԻԿ— Դուրս կորի այստեղից, թե չե...

ՄԵԼՔՈՆ— Թե չե ինչ. աջ ախանջա կտրես փոշ
այ... չեճմակավոր քոռ մինիստր:

ՈՆԻԿ— Այ քեզ քոռ մինիստր... (Առնում է մի
աթոռ յեզ հարձակվում Մեկրոնի վրա):

ՄԵԼՔՈՆ— Հը, հը... (Դուրս):

Տ Ե Ս. ԺԲ.

ՆՐԱՆԻ ԱՌԱՆՅ ՄԵԼՔՈՆ: ՄՏՆՈՒՄ ԱՆ ՍԵՅՈՎ ՅԵՎ,
ՍՈՒԼԻՆՈ

ՈՆԻԿ— Ե՛կան, Եկան. տեղներդ կանգնեցեք:
(Կանգնում են լուրջ):

ՍԵՅԻԴ ՅԵՎ ՍՈՒԼԻՆՈ— (Մտնում են հանդիսա-
վոր ու լուռ կանգնում: Մինիստրները խոնարհ գլուխ
են տալի: Իրար տարորինակ տեսքից ու հագուստից
զարմացած, ծիծաղները հագիվ զսպում են):

ՈՆԻԿ— (Պատրաստվում է ճառի) Պարոնայք մի-
նիստրներ Ադրբեջանի և Վրաստանի. փողջունում ենք
ձեր զալուստը: Բարով եք յեկել: Մենք մի քանի
հարցերի մասին պետք է խոսենք և վճռենք. Նստե-
ցեք, ինչ եք կանդներ. Առաջինը այդ հարցերից, փոր
մեզ համար ունի մեծ նշանակություն, դա վերաբե-
րում է ձեզ, պ. Սեյիդ: Դուք նստել եք Բազվում և

չեք թողնում մեզ համար նավթ բերենք: Յեթե դուք
նավթ չըտաք մեզ, մենք պատերազմ կըհայտարարենք
ձեզ, և կրիսենք ձեր Բազուն և ձեր նավթը: Տո ետ
ինչ ես գրել գլխիդ, կասես զարշոկ բլի: Յերկորդ
հարցը վերաբերում է ձեզ պ. Սուլիկո: Դուք ձեր
դորքն ուղարկել եք մեր յերկրի սահմանները և ու-
զում եք խլել մեր Լոռին: Մենք պահանջում ենք,
փոր դուք անմիջապես հետ կանչեք ձեր զորքը, թե
չե մենք հրաման կըտանք, փոր մեր զորքը գա և ձեզ
դուրս քշի մեր յերկրից: Կեցցե արգար պատերազմը:
Ինչ եք փայտի նման ցցվել, ձեն հանեցեք Ե...

ՄԱՐԳՈ— (Ունիկին) Այգպես չի կարելի խոսել
մինիստրների հետ: Սուլիկո, ինչո՞ւ ոֆիցերի շորեր
չունես, փոր պողրուկ անենք:

ՍՈՆԻԿ— Ինչո՞ւ չեք խոսում, մուռնջ եք, թե լե-
զուններդ կատուն տարել ե:

ՈՆԻԿ— Թե չեք ուզում խաղալ, յետ գնացեք.
յես իսկույն կը կանչեմ Մեկրոնին, փոր ձեզ դուրս
անի: Մեկրոն, Մեկրոն:

Տ Ե Ս. Ժ Գ.

ՆՐԱՆԻ ՅԵՎ ՄԵԼՔՈՆ

ՄԵԼՔՈՆ— (Ժիծաղելով) Ես ինչ մասխարու-
թիւն եք անում տո... լոխտ ել մինիստր Եք...

ՈՆԻԿ— Ինչ եք եկել ու փքված հնդուհավի պես
կանգնել, չեք խոսում:

ՄԵԼՔՈՆ— Սա փողեղի մինիստրն ա:

ՍՈՒՐԻԿ— Ազրբեջանի:

ՄԵԼՔՈՆ— Պարոն մինիստր. մենույում մի պրո-
պուզա գրի ինձ հմար: Իմ նանը հիվանդ ա, ուզում
եմ մի գրվանքա շաքար զարգեմ, դամոմենն խլում ա:

ՍԵՅԻԴ— Հեռացեք:

ՄԵԼՔՈՆ — Սուլիկո, դու վորդեղի մինխտար ես:

ՈՆԻԿ — Վրաստանի:

ՄԵԼՔՈՆ — Ոհո... Սա դորանյա երևում. խան-
չալ ել ունի: Շենի ձիւրիմե կնյազ մինխտար. մի քա-
նի հագեր տղա ունեմ բստեղ, տաորի տաղյազը փոնո-
տել ա, թե կըլի մի թուղթ գրի, բաց թողեն:

ՍՈՒԼԻԿՈ — Ձեմ գրում. դենը կաց թե չե...

ՄԵԼՔՈՆ — Կամաց տո... փորըս վեր շածես:
(Դրսից մոր ձայնը — «Մ'ելըո'ն, Մ'ելըո'ն»): Գալիս
եմ խանըմ: Պրոպուզտ տվեք կուխնին գնամ:

(Յերգում է) «Մինխտարի խաղ նմ անում:

Վոտից բոնում կախ եմ անում,

Վոտից բոնում կախ եմ անում»: (Դուրս):

Տ Ե Ս. ԺԴ.

ՆՐԱՆԵ ԱՌԱՆՑ ՄԵԼՔՈՆԻ

ՍԵՅԻԴ — (Յիլինդը հանում է ցած դնում, ձեռ-
նոցները մեջն ածում, ուղղվում է յնվ կոկորդը մաք-
րելով սկսում ճառը): Պարոններ. մենք լավ հարևան-
ներ ենք յեղել, բայց դուք այժմ մեզ հետ վատ եք
վարվում. մենք շարունակ նամակներ ենք, ստանում,
թե մեր ցեղակիցներին թալանում եք: Դուք նավթի
մասին եք խոսում, բայց մեր սարերը խլել եք ու չեք
թողնում գնանք. յեթե դուք չեք թողնի, մենք ել
կը գանք ձեր սարերը կըխլենք: Կռիվ ե, թող կռիվ
լինի. մենք շատ ենք, դուք քիչ, կըհաղթենք ձեզ:

ՍՈՒԼԻԿՈ — Ուրեմն կովում ենք, դե պատրաստ-
վեցեք: Ուռն...

ՄԱՐԳՈ — Ի՞նչ եք հիմար — հիմար դուրս տալի:
Սա ինչ խաղ ե. դեռ չըսկսած արդեն կովում եք:

ՍՈՆԻԿ — Եկեք ուրիշ բան խաղանք:

ՈՆԻԿ — Ձեններդ կտրեցեք, մինխտարներն ետպես

են լինում. դեռ խոսում են, հետո կովում: Պարոն
Սուլիկո, խոսեցեք:

ՍՈՒԼԻԿՈ — Յես այստեղ յեկա, պարոններ, վոր
հայտնեմ ձեզ, թե դուք ուզում եք մեր թիֆլիսը խը-
լեք: Ինչքան զաղթական հայ կա, լցվել են մեր քա-
ղաքը. մեր հացը կտրում են: Մենք պահանջում ենք,
վոր բոլոր հայերը գնան Հայաստան, հակառակ դեպ-
քում, մենք նրանց բոլորին դուրս կանենք ե... ե...
դուքս կանենք:

ՍՈՒԼԻԿՈ — Դուք պարոններ, սպասեցեք: Այ, դու
պարոն Սուլիկո, տոտմ ես Հայաստան գնան մեր
զաղթականները. այնտեղ հաց չկա, իսկ դուք ճանա-
պարհները կտրել եք ե չեք թողնում հաց տանեն:
Ի՞նչ ե, ուզում եք կոտորվեն սովից:

ՍՈՒԼԻԿՈ — Թող կոտորվեն. հապա մենք պիտի
կոտորվենք, ինչ ե...

ՈՆԻԿ — Դուք պատերազմ եք հայտարարում, մենք
խակույն ցույց կըտանք, թե ինչ կը նշանակի կովել
մեր դեմ, մենք ձեզ ցույց կըտանք մեր ուժը, մենք
յերկու տերոպլան ունենք, չորս թնդանոթ, փամփու-
շաներ ու խմբապետներ:

ՍՈՒԼԻԿՈ — Մենք գվարդիա ունենք, պուլիմյոտ
ունենք, ես ել իմ խանչալը...

ՍԵՅԻԴ — Կովում ենք, կովում ենք, ուռն...
(խառնվում են իրար):

ՈՆԻԿ — Սպասեցեք, սպասեցեք, եղպիս չի կարե-
լի, պետք է կարգին կովենք: Ամեն մեկը թող մի
կողմ անցնի, վոր կարգին պատերազմ լինի: Այ, Սեյիդ,
ես կողմը ձեր Ագրբեջանը, Սուլիկո, ես ել ձեր Վը-
րաստանը, ես կողմն ել մեր Հայաստանը: Դուք ել
շուտ արեք էյ, Մարդո, Սոնիկ, զեղերը բանը պատ-
տասեցեք, վոր վիրավորներին դեղ տաք ու վերջերը
կապեք: (Սենյակը ըստանում են Յ մասի, իրերը

(աթուռ դիման) շուտ են տալիս—«յերկիր» են շինում ապա պատրաստվում են հարձակման դիմելու):

ՍՈՆԻԿ—Դեղեր չըկան, կամաց կովեցեք, փոր իրար գլուխ չը ջարդեք:

ՍՈՒԼԻԿՈ—Իմ տեղը փոքր է:

ՍԵՅԻԴ—Ի՞նչ էլ փոքր է:

ՈՆԻԿ—**ՍՈՒԼԻԿ**—**ՄԵՐՆ** էլ փոքր է:

ՍՈՒԼԻԿՈ—Կը կովենք ու իրարից կը խլենք:

ՈՆԻԿ—Սպասեցեք, գուռնան փչենք, հետո կրուվենք: (Անոնում է մի մանկական փող ու փչում: Տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ):

ԲՈՂՈՐԸ—Ուռա՛... (Հարձակվում են մեկ-մեկու վրա, յեվ ամեն մեկն աշխատում է ջանքերով մյուսի սահմանը: Խտնովում են իրար: Մարզոն ու Սոնիկը բաշվում են մի անկյուն: Մնիկը փողը քերանին առաջ է անցնում ու գոչում «հետեվեցե՛ք ինձ»: Իրար յետևից գնում են, սենյակի մեջ պտույտ են գալիս: Ամենից վերջը միանում են Մարզոն ու Սոնիկն ել Մնիկն ու Սուրիկը հայերեն առում են—«մեկ, յերկու, յերեք, չորս», Սեյիդը—«քիւր, իքի, ուչ, դորդ», Սուլիկոն—«երթի, որի, սամի, ոթխի», Մնիկը խփում է Սեյիդի ցիլինդրին, վորն ընկնում է ու դորդոց հանում: Կարգը խանգարվում է: Կրկին խտնովում են իրար «պրուպուսկ», «պրուպուսկ» են գոռում: Ուզում են իրարից բաժանվել, բայց միաժամանակ կովում են: Սուլիկոն խանգալը հանում է—կատրած ու ժանգոտած: Սուրիկը վերցնում է մութաքան—«սա թնդանոթ է» — «քում, քում, քո՛ւմ»: Սեյիդը «վերալոր» ընկնում է: Սոնիկն ու Մարզոն մոտենում են):

ՍԵՅԻԴ—Ո՛ք, յես շատ ծանր վերափոր եմ: Ոգնեցեք...

ՄԱՐԶՈ—Վերաեզդ է վերափոր պարոն մինխար...

ՍԵՅԻԴ—Սիրոս, մեջքս, գլուխս, վռանքս, ա՛մն տեղս:

ՍՈՆԻԿ—Խեղճ Սեյիդ... (Մյուսները շարունակում են իրարից «նող խլիլ»: Շարունակ լսվում է «էո-ոին ինձ»—«թիֆլիսն ինձ»—«Բագուն ինձ», «Յերեվանն ինձ»—նեքս է մանում Մեկրոնը, ափիլը ձեռքին):

Տ Ե Ս. ԺԵ

ՆՐԱՆԵԷ ԵՎ ՄԱԼԻԳՈՆ

ՄԵԼԻՔՈՆ—Ուռա՛... Հայաստանը բալչեիկ ա դառել, ուռա՛...

ԲՈՂՈՐԸ—(Շրջապատում են) «պրոպուսկ»:

ՄԵԼԻՔՈՆ—Մ. ա. քեզ պրոպուզա: (Խփում է Սեյիդի ցիլինդրին վեր դցում) Ես ինչ էք արել հը, ես ինչ էք արել. ձեզ համար եմ ես ոթախը սրբել, սարք ու կարդ արել, վոր դուք դաք խառնախիոր անեք, հը, ես ինչ ա, դե հմի դուք հվաքեցեք ու սրբեցեք տեհամ կարբմ էք... («Մինխտրները» պահվում են այս կամ այն անկյունում կամ սեղանի ու մահճակալի տակ) Մեկրոնը (պարելով ու յերգելով):

Ավլեմ թափեմ փոշին,

Ավլեմ, թափեմ փոշին,

Բալչեիկի գնդակը

Մենչեիկի գոշին,

Բալչեիկի գնդակը

Դաշնակների գոշին:

Տ Ե Ս. ԺԶ

ՆՐԱՆԵԷ ԵՎ ՄԱՅՐԸ

ՄԱՅՐԸ—Ի՛նչ ես անում Մեկրոն. գժվել ես, ինչ է:



ՄԵԼՔՈՆ—Խանրմ ջան, գեղն եմ գնրմ, գեղը
աղին ասա ըստ ըստ անի ինձ:


ՄԱՅՐԸ—Ի՞նչ ե պատահել, ուր ես գնում:

ՄԵԼՔՈՆ—Խանրմ ջան, մեր գեղը Բալշիկի ա
դառել, գնրմ եմ մեր տուն, ինչ կը տան, վար ու
ցան կանեմ, բաղ ու բաղչա կըշինեմ: (Յերգում ե)

Բալշիկի գնդակը

Բուրժուականի գոշին:

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր



ԳԻՆԸ 50 ԿՈՊ. ՉԵՐՎ.

0000078

ՇԱՊԻԿԸ ՆԿԱՐԵՑ—Գ. ՔՈԶԱՐ

20 15



NL0006978

